եւ սպանանել, որոց կամիցին աւազակութեամբ մտանել 'ի վանս, ՌՌՀ (1703)։

Եկն Պալթաճի այվազ Փաշան յԵրուսաղէմ, եւ երեր ընդ իւր զՀիւսպատոս Ֆրանկաց, հաստատել զնոսա անդ, ('ի 5 Փետրվար · 1700)։ Ժողով եղեւ վասն դատաւորին, որ էր որդի Վանի էֆէնտեայ, զի սպանցեն զնա, այլ միջնորդութեամբ ղերծաւ։ Սպանին զՇահվէնտէրն, խնդրեցին զԱֆիֆին և զայլս, բայց ոչ գտին · դատաւորն խիստ անիրաւութիւն արար · (յ8 Մայիս, 1703)։

Ի 18 ամսեան Օգոստոսի՝ միաբանք Ս · Փրկչի վանաց, ըստ սովորութեան, ոչ եկին 'ի Ս · Յակոբ վասն կերակրոյ, և գնացեալ ումանք 'ի միաբանաց գտին զդուռն վանաց կիսաբաց, և մտեալ 'ի ներքս տեսին զդիակունս անկելոց, խորտակեալ դրունք եկեղեցւոյ և սենեկաց, և մերկացուցեալ իսպառ յամենայն զարդուց և 'ի կարասեաց · և դարձ արարեալ անտի՝ պատմեցին վէքիլ Յովհաննէս վարդապետի, և նորա ժողովեալ առ հասարակ զմիաբանսն, դիմեաց առ դատաւորն և առ քաղաքապետն եւ պատմեցին նոցա զեղեալսն։ Եւ նոցա եկեալ բազմութեամբ 'ի քննութիւն՝ տեսին զդիակունս միաբանաց թաթաւեալ յարեան, որք էին Սարգիս վարդապետ և երեք ծերունի միաբանք · յափշտակեալ եկեղեցին և սենեակքն։ Ի դիր արձանացոյց դատաւորն զոր ետես և լուաւ, և ետ 'ի ձեռս Հայոց։ Ժողովեալ էին անդ ընդ բազմութեան Հայոց Նաեւ Լատինք, Յոյնք, Այլազգիք և Հրէայք իսկ 'ի տեսարանն ողորմելի։ Յետ աւաղելոյ և կոծելոյ՝ բարձին զդիակունս և թաղեցին յիւրաքանչիւր 'ի դերեզմանի իւրում։ Եւ 'ի բողոք բառնալ Հայոց վասն այսր առ դատաւորս, ասեն՝ դուք գիտէք զթշնամիս ձեր, որոնեալ գտէք և տուք 'ի ձեռս մեր՝ զի դատեսցուք։ Եւ ապա բռնի առեալ 'ի նոցանէ զ4 քսակս արծաթոյ, իբր տուգանս վասն մեռելոց, արձակեցին զնոսա։ Եւ նոցա եկեալ 'ի վանս Ս · Յակոբայ, կոչեցին զվատինս և զՅոյնս 'ի խորհուրդ, թէ զի՞նչ պարտ իցէ առնել, զի կորուսին զարս և զդրամս · և նոքա խոստացան միաբանիլ ընդ նոսա 'ի դտանել զաւազակս։ Հայք զհետ եղեն յօրէ յայնմանէ յորոնել և պատուիրել եւս · ումանք 'ի բարեկամաց Բեթղեհէմի գտին զումն 'ի ընակչաց